



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## Ս. ԽԱԶ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԶՈԱՍԵԱԿԻ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՍԱԴԵՏԵԼՈՎ

### **ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ ՈՒ ՀԱՅ ԴՊՐՈՑԸ ԽԱՐԻՍԻՆ՝ ՀԱՅՈՒ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԿԵՐՏՈՒՄԻՆ ՈՒ ՊԱՅՊԱՆՈՒՄԻՆ**

*ՇԵՇՏԵՑ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ*

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Արեւմտեան մեր Թեմին շնորհած հովուապետական այցելութիւնը Կիրակի գիշեր պաշտօնապէս փակուեցաւ յիշատակելի հանդիսութեամբ մը: Արդարեւ, Վեհափառ Հայրապետը հանդիսապետեց Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի 30րդ տարեդարձի տօնակատարութեան, որ նաեւ Ս. Խաչ եկեղեցւոյ հիմնադրութեան 90րդ տարեդարձն էր: Այս առիթով, Վեհափառ Հայրապետը եղաւ Մոնթեպելլոյի ծխական համայնքին հետ, աղօթք մատուցանեց Տաճարին մէջ, որմէ ետք, ծխական համայնքը ի պատիւ Նորին Ս. Օծութեան կազմակերպած էր ճաշկերոյթի հանդիսութիւն մը, նշելու համար զոյգ յոբելեանները:

Վեհափառ Հայրապետը Ս. Խաչ Մայր տաճար ժամանեց երեկոյեան ժամը 6ին, ուղեկցութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ ժողովականութեան ներկայացուցիչներու: Հայրապետական շքախումբը դիմաւորուեցաւ եկեղեցւոյ հովիւներուն, հոգաբարձութեան, ժողովականութեան ու Ազգ. Մերոպեան վարժարանի ներկայացուցիչներուն կողմէ: Վեհափառ Հայրապետն ու ընկերակիցները Տաճար առաջնորդուեցան «Հրաշափառ»ով: Հաւատացեալներու հոծ բազմութիւն մը լեցուցած էր տաճարը: Տեղի ունեցաւ Կանոնական աղօթք:

Առաջնորդ Սրբազանը գոհունակութիւն յայտնեց, որ Վեհափառ Հայրապետը, ընդառաջելով իր ու Թեմիս ժողովականութեան հրաւերին, հովուապետական այցելութիւն մը շնորհած է մեզի, եւ ահա, աւելի քան երկու շաբաթ տեւած այցելութիւնը վերջ կը գտնէ այս երեկոյ, Միացեալ Նահանգներու արեւմտեան շրջանի ամենէն վաղեմի եկեղեցիներէն՝ Ս. Խաչի յարկին տակ: Առաջնորդ Սրբազանը յիշեցուց, որ ամէն տարի, եկեղեցւոյ անուանակոչութիւնը կը տօնուի Վերացման Խաչի տօնին, իսկ այսօր, ուշագրաւ զուգարդիպութեամբ մը, Վեհափառ Հայրապետը ծխական այս ընտանիքին հետ է Գիւտ Խաչի տօնին օրը, իր օրհնութիւնները բաշխելու հաւատացեալներուն ու իր պատգամով գօտեպնդելու ծառայողները:

Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ ու փառք տուաւ Աստուծոյ, իր այս այցելութեան յաջող լրումին ու Ս. Խաչ Մայր Տաճարի յարկին տակ գտնուելուն առիթով: Ան իր օրհնութիւնները բաշխեց ներկաներուն ու շրջանիս հայութեան, աղօթք բարձրացնելով առ Աստուած, որպէսզի աւելցնէ բոլորին հաւատքը, յոյսն ու սէրը:

Արարողութեան աւարտին, Կիրակնօրեայ դպրոցի աշակերտները երգեցին «Կիլիկիա»ն եւ Հայրապետական Մաղթանքը:

## ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

Արարողութենէն ետք, Վեհափառն ու շքախումբը, հաւատացեալներուն հետ միասին, անցած »Բաղրամեան« սրահ, ուր կազմակերպուած էր տաճարի 30ամեակին ու եկեղեցւոյ 90ամեակին նուիրուած տօնախմբութիւնը: Ներկայ էին, թեմիս ու ծխական շրջանի ժողովականութեան ներկայացուցիչներուն կողքին՝ պետական անձնաւորութիւններ ու ներկայացուցչական այլ դէմքեր, որոնց շարքին՝ խորհրդարանի անդամներ՝ Չաք Բալտերոն, Թամ Բալտերոն, Էնթընի Փորթանթիւնոյի ներկայացուցիչը, Լոս Անճելըս գաւառի Assessor ճան Նոկեզ, Սոնթեպելլօ, Փիքօ Ռիվերա եւ Սոնթերէյ Փարք քաղաքներու քաղաքապետներ ու քաղաքապետական խորհուրդի անդամներ, Սոնթեպելլոյի հանրային վարժարաններու համակարգի ներկայացուցիչը, եւ Լոս Անճելըս քաղաքի City Attorneyի գրասենեակին վարիչը:

Հանդիսավարութիւնը կատարեց Տիար Նազարէթ Ծատուրեան: Խօսք առին Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիքիճեան եւ Ազգ. Վարչութեան ատենապետուհի Տիկին Ռիմա Պօղոսեան: Պետական անձնաւորութիւններ ողջոյնի եւ բարեմաղթութեանց հռչակագիրներ յանձնեցին Վեհափառ Հայրապետին ու եկեղեցւոյ հոգաբարձութեան:

Ազգ. Մեսրոպեան վարժարանի աշակերտները հրամցուցին գեղարուեստական յայտագիր մը, որ կազմուած էր երգերու եւ արտասանութիւններու փունջով մը:

Իր պատգամը տալու համար Վեհափառ Հայրապետը հրաւիրելով՝ Առաջնորդ Սրբազանը նշեց, որ զոյգ ամեակները խորքին մէջ ծառայութեան ուխտի վերանորոգութեան առիթ է բոլորիս համար: Ան անգամ մը եւս շնորհակալութեան խօսք ուղղեց Վեհափառ Հայրապետին՝ իր շնորհաբեր այցելութեան համար, եւ հաւաստեց, որ գաղութը իմաստութեամբ ու ծառայութեան ոգիով պիտի շարունակէ գործել վասն եկեղեցւոյ պայծառութեան ու Աստուծոյ փառքին:

## «ՀԱՅՈՒ ԻՆՔՆՈՒԹԻՒՆ»

Վեհափառ Հայրապետը օրհնութեամբ ու գնահատանքով ողջունեց ներկաներն ու Զաւիճորնիոյ հայութիւնը: Ան կանգ առաւ հայութեան կեանքին մէջ եկեղեցւոյ ու դպրոցի կարեւորութեան ու կենսական արժէքին վրայ, շեշտելով, որ անոնք հայութեան համար ինքնութեան կերտումի ու պահպանման աղբիւր են: Վեհափառ Հայրապետը յորդորեց հայութեան գաւազները, որ տէր կանքնին հայու ինքնութեան ու նոր սերունդները

տոգորեն այդ ոգեղեն հարստութեամբ: Աւելին, ան ներկաներուն ուշադրութեան յանձնեց, որ այս քաղաքը իր հողին վրայ բարձրացուցած է հայոց Ցեղասպանութեան յուշարձան, որ մնայուն պատգամ է բոլորիս համար: Նորին Ս. Օծութիւնը ընդգծեց մեր Դատին ու պահանջատիրութեան հաւատարիմ մնալու հրամայականը, մեր իրաւունքներուն հետապնդման հզօրացման պահանջը, նկատել տալով, որ մեր եկեղեցին ու հայ դպրոցը առանցքային դեր ունին նաեւ այս առաջադրանքին մէջ:

## **HIS HOLINESS PRESIDES OVER 90<sup>TH</sup> ANNIVERSARY OF HOLY CROSS CHURCH AND 30<sup>TH</sup> ANNIVERSARY OF HOLY CROSS CATHEDRAL IN MONTEBELLO**

On the evening of Sunday, October 23, 2011, His Holiness Catholicos Aram I arrived at Holy Cross Cathedral in Montebello where a Canonical Prayer was held, followed by a banquet in honor of His Holiness as well as the 30<sup>th</sup> anniversary of Holy Cross Cathedral and 90<sup>th</sup> anniversary of Holy Cross Church.

His Holiness arrived at the Cathedral accompanied by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and was welcomed by the Parish Priests, Parish Board members, and Mesrobian School representatives.

With the singing of the "Hrashapar" hymn, His Holiness entered the Cathedral which was filled to capacity with faithful who had gathered to receive his blessings.

A canonical prayer service was held, after which the Prelate delivered his remarks, giving thanks for the Pontifical Visit of His Holiness which spanned over two weeks and was coming to a close that evening at the oldest Church in the Western United States. The Prelate noted that each year the name day of the Cathedral is held on the Exaltation of the Holy Cross, and by a wonderful coincidence His Holiness was with the parish community on the Feast of the Discovery of the holy Cross.

His Holiness thanked the Lord for the successful conclusion of the Pontifical Visit and for the opportunity to be with the Holy Cross community. He conveyed his blessings to the faithful, praying for Almighty God to fortify them all in their faith, hope, and love.

The prayer service came to a close with the singing of the Cilician and Pontifical anthems by the Sunday School students.

His Holiness and entourage then headed to "Bagramian" Hall for the celebration of the Cathedral 30<sup>th</sup> anniversary and Church 90<sup>th</sup> anniversary. Public officials and dignitaries were among the hundreds of guests in attendance.

The evening's Master of Ceremonies was Mr. Nazareth Sadorian. Remarks were delivered by Central Executive member Mr. Khajag Dikijian, and Executive Council Chair Mrs. Rima Boghossian. Local public officials presented His Holiness with certificates and proclamations.

The cultural program was comprised of songs and recitations by Mesrobian School students.

The Prelate noted that these two milestone anniversaries are an opportunity for reflection and renewal of our pledge to serve. He once again thanked His Holiness for gracing the Prelacy with a Pontifical Visit, and affirmed that our community will continue to serve for the splendor of our Church and nation with renewed fervor and vigor.

His Holiness emphasized the great importance of our Churches and schools in the lives of our people, noting that these two institutions form and preserve the identity of our people. He urged the guests to remain true to their heritage and instill the spirit of the Armenian people in our youth. Noting that the city of Montebello has in its midst the Genocide monument, His Holiness stated that should be a constant message and reminder for the community and for all to continue their committed service for the furthering of the Armenian Cause.